

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԱՄԱԼՅԱ ԱՐՄԵՆԻ ՍՈՂՈՄՈՆՅԱՆ

20-ՐԴ ԴԱՐԻ 2-ՐԴ ԿԵՍԻ

ԱՆԳԼԱԼԵԶՈՒ ԷՄԻԳՐԱՆՏԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

(ՎԼԱԴԻՄԻՐ ՆԱԲՈԿՈՎ, ԽԱԼԵԴ ՀՈՍԵՅՆԻ)

Ժ.01.07 - «ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ»

ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒԻ

ԳԻՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՀԱՅՑՄԱՆ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ

ՍԵՂՄԱԳԻՐ

Երևան 2022

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական

համալսարանում:

Գիտական ղեկավար՝ Բ.Գ.Թ., դոցենտ Անուշ Ռոստոմի Սեդրակյան
Պաշտոնական ընդդիմախոսներ՝ Բ. Գ. Դ., պրոֆեսոր
Կարլեն Ռաֆայելի Մատինյան
Բ.Գ. Թ., դոցենտ
Կարինե Հրաչիկի Գուլանյան
Առաջատար կազմակերպություն՝ ՀՀ ԳԱԱ Մանուկ Աբեղյանի
անվան գրականության ինստիտուտ

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2022 թ. Դեկտեմբերի 22-ին՝ ժամը 14.30-ին, ԵՊՀ-ում գործող՝ ՀՀ ԲՈԿ-ի 066 մասնագիտական խորհրդի նիստում: Հասցե՝ ք. Երևան, Ալեք Մանուկյան 1, ԵՊՀ-ի Եվրոպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետի մասնաշենք, 420 լսարան:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Երևանի պետական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2022 թվականի նոյեմբերի 11-ին:

Մանագիտական խորհրդի

գիտական քարտուղար՝



Բ. Գ. Թ., դոցենտ Ա.Վ. Եգանյան

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ատենախոսությունը նվիրված է 20-րդ դարի 2-րդ կեսի անգլալեզու էմիգրանտական գրականությանը, մասնավորապես ռուս Վլադիմիր Նաբոկովի և աֆղան Խալեդ Հոսեյնիի ստեղծագործական արվեստի քննությանը:

Էմիգրանտական գրականության առանձնահատկությունները բացահայտելու համար նախ պետք է հասկանալ, թե ի՞նչ է միգրացիան, առանձնացնել միգրացիայի տեսակները, ձևերը, դրդապատճառները: Ըստ մոտիվացիայի միգրացիան կարող է լինել կամավոր և հարկադիր:

Արմատները, լեզուն, հասարակական նորմերը մարդու ամենակարևոր բնութագրիչներն են: Լքելով հայրենիքը՝ միգրանտը սկսում է նոր նկարագրիչներ փնտրել իր համար¹:

Միգրացիան և աքսորը տարիներ շարունակ գրողների համար դիտարկվել են որպես մետապատմական վտանգներ, սակայն քսաներորդ դարը միգրացիոն ծավալների մեծացման պատճառով դարձել է գրականության պատմության որոշիչ առանձնահատկություններից մեկը, եթե ոչ ամենաորոշիչը: Խնդիրը, որի մասին ամենաշատն է խոսվում էմիգրանտական գրականության համատեքստում, կապված է անձնական, ազգային, մշակութային, կրոնական ինքնության հետ: Անհատը, հայտնվելով օտար մշակույթում, բախվում է ինքնության վերախմաստավորման խնդրին և ձեռք բերում հիբրիդային ինքնություն: Ինքնության խնդրին բախվում են նաև այն մարդիկ, որոնք ապրում են միգրանտների կողքին: Սեփական հայրենիքում նրանք իրենց երկրին նայում են օտար ու անձանոթ էմիգրանտ գրողի աչքերով: Վերջինիս բացատրությունը շատ պարզ է. բոլորս ապրում ենք միգրացիայի դարաշրջանում, որտեղ բոլորս էլ պոտենցիալ գաղթականներ ենք:

ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻՎԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Աշխատանքի թեման խիստ **արդիական** է էմիգրանտական գրականության թեման բարձրաձայնելու, տարբեր գրական դիտարկումներ անելու և թեման նորովի ներկայացնելու տեսանկյունից:

¹ Salman Rushdie, “Günter Grass”, in *Imaginary Homelands: Essays and Criticism*, 1981-91, London: Granta Books, 1992, p. 278.

Աշխատանքը խիստ արդիական է, քանի որ գիտնականների և գրաքննադատների կողմից տարիներ շարունակ ուսումնասիրված հեղինակի կողքին բացահայտվում է հայաստանյան իրականության համար անհայտ, աֆղան հեղինակ Խալեդ Հոսեյնին:

Աշխատանքի արդիականությունն այն է, որ միգրացիոն գործընթացների հետ անմիջականորեն կապված էմիգրանտական գրականությունը կարևոր նշանակություն ունի: Հաշվի առնելով այն փաստը, որը դինամիկ զարգացող աշխարհում մարդիկ անընդհատ գտնվում են սոցիալական, տնտեսական, կրոնական, բարոյական հանգամանքներով պայմանավորված միգրացիոն գործընթացներում, ձևավորվում է էմիգրանտի ինքնություն, որի լեզվամշակութային շերտերի բացահայտումը և քննությունը անհրաժեշտություն է, ինչը ներկա աշխատանքի նպատակներից մեկն է: Աշխատանքն արդիական է նաև այն առումով, որ Խալեդ Հոսեյնիի ստեղծագործության վերաբերյալ շատ քիչ գիտական նյութ է հասանելի, իսկ հայ գիտական մտքի տեսանկյունից այս աշխատանքն առաջինն է:

ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ, ՆՊԱՏԱԿԸ, ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ատենախոսության ուսումնասիրության **առարկան** 20-րդ դարի 2-րդ կեսի անգլալեզու էմիգրանտական գրականությունն է, մասնավորապես ռուս վտարանդի Վլադիմիր Նաբոկովի և աֆղան էմիգրանտ Խալեդ Հոսեյնիի ստեղծագործությունները:

Սույն աշխատանքի **նպատակն** է էմիգրանտական գրականության համատեքստում վերլուծել էթնիկ հիշողության, հավերժական վերադարձի, ամերիկյան գրական խառնարանի առանձնահատկությունները: Աշխատանքում ներկայացված է էթնիկ մշակույթի և գերմշակույթի բախումը: Կարոտի, ինքնության, պատկանելության, բազմամշակութայնության, այլության և աքսորի կոնցեպտների քննությունն օգնում է վեր հանել մի շարք հոգեբանական իրողություններ, որոնց էմիգրանտն առերեսվում է՝ գաղթական (էմիգրանտ) դառնալով: Ներգաղթյալի կարևորագույն խնդիրներից մեկը նոր միջավայրում դառնում է ազգային գենետիկ կոդի պահպանումը:

Արագ զարգացող աշխարհում պատկանելության խնդիրը մնում է ժամանակի հրամայականը: Չնայած մեր արմատները փորձում են մեզ պահել հայրենիքում, շատ դեպքերում էմիգրանտ դառնալն անխուսափելի է դառնում: Միգրացիան, ըստ էության, դառնում է հասարակական նորմ և ինքնության, պատկանելության

և տան հասկացությունները վերանայելու և այլ դիտանկյան տակ ներկայացնելու անհրաժեշտություն է առաջանում: Էմիգրանտական գրականության մեջ արտացոլվում են երեք հիմնական կատեգորիաներ՝ դիցաբանական, սոցիոլոգիական և հոգեբանական: 20-րդ դարը համարվում է միգրացիայի դարաշրջան և մեր նպատակն է Էմիգրանտական գրականության համատեքստում բացահայտել միգրացիայի թաքնված շերտերն ու բարձրացնել մի շարք հարցեր, որոնք կօգնեն մեզ ավելի լավ մեկնաբանելու Էմիգրանտական գրականության առանձնահատկությունները:

Աշխատանքում դրվում են հետևյալ **խնդիրները**.

1. բացահայտել Էմիգրանտական գրականության արմատները, Էմիգրանտ դառնալու պատճառները, Էմիգրանտական գրականություն ստեղծելու անհրաժեշտությունը,
2. բացահայտել Էմիգրանտական գրականության ժանրային, լեզվամշակութային առանձնահատկությունները,
3. Էմիգրանտ հեղինակների և նրանց ստեղծագործությունների հիման վրա ցույց տալ Էմիգրանտական գրականության մշակութային նմանություններն ու տարբերությունները,
4. Անդրադառնալ փոքր ժողովուրդների խնդրին:

ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՔԸ

Ատենախոսության մեջ համառոտ նկարագրելով աշխատանքի մեթոդաբանական հիմքը՝ ներկայացվել է թեմային առնչվող քննադատական գրականության բավականին ընդարձակ ակնարկ, ինչպես նաև ընդհանուր գծերով՝ նյութի ուսումնասիրության աստիճանը, Էմիգրանտական գրականության պատմությունը, հիմնվելով տարբեր գրականագետների ու գրաքննադատների աշխատությունների վրա: Աշխատանքում օգտագործվել են պատմագրական, համեմատական, համադրական, ինչպես նաև մշակութաբանական վերլուծության **մեթոդները**: Հետազոտության առարկա են հանդիսացել Վլադիմիր Նաբոկովի և Խալեդ Հոսեյնիի գեղարվեստական երկերը, ինչպես նաև գրական-քննադատական հոդվածները:

Առաջնորդվելով պատմահամեմատական մեթոդով՝ բացահայտվել է հասարակական մի շարք երևույթների էությունը, վերլուծվել են քննարկվող

ժամանակաշրջանը, դրա ներքին յուրահատկություններն ու գրական-գեղարվեստական համարժեք մոդելները: Հետազոտության ընթացքում հաշվի են առնվել գրականագիտության ինչպես նախկին, այնպես էլ ներկայիս փորձը, ձեռքբերումներն ու պահանջները, մասնավորապես համեմատական-վերլուծական մեթոդի սկզբունքները, որոնք դարձել են տեսական-մեթոդաբանական ուղեցույց:

ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹԸ

Եթե Վլադիմիր Նաբոկովի ստեղծագործությունները քիչ թե շատ հայտնի են ընթերցողին, ապա ժամանակակից աֆղան հեղինակ Խալեդ Հոսեյնին գրեթե անծանոթ է հայ ընթերցողին, և հայ գրականագիտությունն առաջին անգամ է նրա ստեղծագործություններն ուսումնասիրության առարկա դարձնում:

Վլադիմիր Նաբոկովի կյանքի ու գրական ժառանգության վերաբերյալ բազում գիտական աշխատություններ կան, որոնք հետաքրքիր տվյալներ են պարունակում գրողի ապրած ժամանակաշրջանի վերաբերյալ, սակայն տեսական, գրականագիտական ու քննադատական վերլուծությունների շարքում չկան հեղինակի «Պին» և «Գունատ կրակ» վեպերի մասին վերլուծություններ: Հատկապես պատշաճ ուսումնասիրության չեն արժանացել էմիգրանտական գրականությանը բնորոշ գծեր պարունակող վերոնշյալ ստեղծագործությունները:

ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության նյութը կարող է օգտագործվել համեմատաբանության նպատակներով կատարվող տարբեր տեսական վերլուծություններում ու աշխատություններում: Աշխատանքն ունի նաև գործնական նշանակություն և կարող է օգտագործվել Նաբոկովին և Հոսեյնին նվիրված դասախոսություններում, էմիգրանտությանն ու էմիգրանտական գրականության խնդիրներին նվիրված դասընթացներում: Ատենախոսության ընթացիկ և հիմնական արդյունքները զեկուցվել են հայաստանյան և միջազգային տարբեր գիտաժողովներում: Հեղինակը նաև տեսաձայնագրություն է ներկայացրել «Էմիգրանտական գրականության առանձնահատկությունները» թեմայով (<http://boon.am/the-specifics-of-migrant-literature-amalya-soghomonian/>):

ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐԸ

Ատենախոսությունը քննարկվել և հրապարակային պաշտպանության է երաշխավորվել ԵՊՀ ԵԼՀ արտասահմանյան գրականության ամբիոնի կողմից: Ատենախոսության հիմնադրույթներն ամփոփված են ՀՀ ԲՈԿ-ի կանոնադրությամբ հաստատված գիտական պարբերականներում:

ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Ատենախոսությունը կազմված է ներածությունից, երեք հիմնական գլուխներից, որոնք ունեն ենթագլուխներ, եզրակացություններից և օգտագործված գրականության ցանկից: Աշխատանքը շարադրված է 174 համակարգչային էջի վրա:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ներածության մեջ ամփոփ ներկայացված է ատենախոսության ուսումնասիրության հիմնական առարկան, հիմնավորված է ընտրված թեմայի արդիականությունը, շարադրված են աշխատանքի նպատակն ու խնդիրները, մատնանշված է գիտական նորույթը, մեթոդաբանական բազան, հարցի պատմությունը և թեմային առնչվող գրականությունը:

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ԵՄԻԳՐԱՆՏԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Առաջին գլխում ներկայացված են էմիգրանտական գրականության առանձնահատկությունները, օտարման և ինքնօտարման հասկացությունները, «ամերիկյան երազանքի» իմաստազրկումը, ինքնության որոնումը էմիգրանտական գրականության տարածքում:

Էմիգրանտական գրականության մեջ ինքնության և մշակութային ավանդույթի բախումը ժամանակի հրամայականն է դառնում և ստիպում բոլոր էմիգրանտներին էկզիստենցիալ ընտրություն կատարել սեփական ինքնության պահպանման և օտարման միջև:

«Էմիգրանտական գրականություն» տերմինն առաջին անգամ ներկայացվել է 1890-ականների սկզբներին ֆրանս-կանադացի քննադատների կողմից, որոնք

փնտրում էին մի անվանում՝ ներկայացնելու Քվեբեկ գաղթած աքսորականների նոր սերնդի պոեզիան և արձակը, որը ո՛չ կարող էր կանադական, ո՛չ էլ քվեբեկական գրականություն համարվել:

Առաջին հերթին պետք է հասկանալ, որ էմիգրանտ գրողները ոչ միայն սոցիալական գործընթացների զոհեր են, այլ իրենց հայրենիքի ծայրը: Նրանք համայնքի, ազգի, հասարակության մի մասն են: Սակայն դառնալով գաղթական՝ նրանք կտրվում են պատմությունից և տեղանքի զգացումից: Նրանց շատ հաճախ չի հաջողվում պատկերել հայրենաբաղձությունը, անոմիան, աքսորը, արմատազրկությունը, անհանգստությունը:

Էմիգրանտ գրողը համարվում է իր սեփական վիճակի կարևորագույն մասնակից դիտորդը: Արտագաղթի հեռանկարը ինքնաանդրադարձող է: Հենց գաղթը տեղի է ունենում, գաղթականը կորցնում է սեփական տան զգացողությունը: Աքսորի գրականությունն անհատական է, սուբյեկտիվ և բազմազան: Այն արտացոլում է, բայց նաև կարող է չափազանցնել կամ նույնիսկ հնարել այն սոցիալական փորձը, որը մղում է դրան: Գաղթը զուտ ժամանակամիջոց չէ մեկնման և ժամանման ֆիքսված կետերի միջև, այլ աշխարհում գտնվելու մի եղանակ՝ վերաբնակեցում:

Էմիգրանտ դառնալու գործընթացը շատ բարդ ու հետաքրքիր է: Գաղթի առաջին փուլը գնալու որոշում կայացնելն է: Հայրենիքը լքելու նախորդ գիշերը լի է սիմվոլիկայով: Հիմնվելով սոցիոլոգիական հետազոտությունների վրա՝ կարող ենք ասել, որ էմիգրանտ դառնալու վերաբերյալ որոշում կայացնելու գործընթացը երբեք հստակ կամ սև-սպիտակ չէ: Շատ գաղթականներ, եթե ոչ մեծամասնությունը, նախքան մեկնումը տառապում են հակասական հույզերից:

Կա ընկերների և ընտանիքի, հայրենիքում հնարավոր հետաքրքրությունների և ազատության ձգողական ուժը, ծանծրույթի, անճանաչելի նկատմամբ ունեցած վախի ճնշող ուժը, որ ստիպում է մնալ: Գոյություն ունեն մի շարք գրական աղբյուրներ, որոնք կարող են օգտագործվել տեսնելու համար, թե ինչպես են գրողները՝ որպես արվեստագետներ, գրում իրենց ժամանակի և տեղի մասին, օգնելով մեզ հասկանալ գաղթի գործընթացը: Ինքնակենսագրական աղբյուրները, ինչպես և ակնկալվում էր, փաստորեն, ավելի նկարագրական են: Աքսորի մոտիվը շարունակվում է, կապը դեպի տուն դեռևս կարևոր է, տուն գալու գաղտնի ցանկությունը պահպանվում է: Սա հատկապես պետք է որ կարևոր լինի ընդունող հասարակության մեջ գաղթականների լիակատար ծուլումը կանխելու համար. ամերիկյան արտագաղթի դեպքում այսօր տեղահանումը և ներգաղթի բացակայությունը սրվում են անօրինական կարգավիճակով: Այնուամենայնիվ,

կա նաև վկայություն այն մասին, որ արտագաղթի նկատմամբ վերաբերմունքը շարունակում է երկիմաստ լինել՝ հաճախ զուգորդվելով փախուստի հետ: Մի կողմից աքսորի գրականությունը սոցիալական վկայություն է, մյուս կողմից գրականությունն անհատական է, սուբյեկտիվ և բազմազան: Այն կարող է արտացոլել, բայց նաև չափազանցնել, մարտահրավեր նետել կամ հասարակական փորձի իմիտացիա ստեղծել:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ԻԱԼԵԴ ՀՈՍԵՅՆԻ ՎԻՊԱԿԱՆ ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԷՄԻԳՐԱՆՏԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ

Երկրորդ գլխում ներկայացված են Խալեդ Հոսեյնի վիպական նորարարությունները էմիգրանտական գրականության համատեքստում: Հեղինակի երեք վեպերի՝ «Օդապարուկ թոցնողը», «Եվ արձագանքեցին լեռները», «Հազար չքնաղ արևներ», օգնությամբ փորձ է կատարվում բացահայտելու արևելյան մոտիվները, օտարության խնդիրը, մեղքի և պատասխանատվության հարաբերակցությունը: Հոսեյնի վեպերի վերլուծության ընթացքում վեր են հանվում մի շարք խորքային ու թաքնված իմաստներ, ինչպես նաև հեղինակի գրականագիտական մոտեցումները հերոսների ճակատագրերին և կյանքի շարունակման հնարավոր ելքի փնտրտուքին էմիգրանտական գրականության համատեքստում:

Թեպետ օտարման թեման մշտապես առկա է համաշխարհային գրականության մեջ, սակայն տարբեր գրողներ տարբեր դիտանկյունից են փորձում այն մեկնաբանել: Այս համատեքստում հետաքրքիր է ուսումնասիրել աֆղան գրող Հոսեյնի արձակը, քանի որ նա դեռևս չուսումնասիրված հեղինակ է հայ գրական ավանդույթում: Օտարման թեման մշտապես արդիական է լինելու էմիգրանտական գրականության մեջ, քանի որ գլոբալիզացման դարաշրջանում ամեն օր ավելանում է այն մարդկանց թիվը, ովքեր հեռանում են իրենց երկրից և իրենցից: Հոսեյնի ստեղծագործություններն իրար կորցրած, իրարից բաժանված հերոսների, նրանց սիրո, ընտանիքի, սպանդից փրկվածների ճակատագրերի ու բռնության մասին է, սակայն վեպերը գրված են ոչ թե մարդկանցից արցունքներ կորզելու, այլ ընթերցողին գրողի մանկության երկիր՝ Աֆղանստան վերադարձնելու համար:

Ազգությամբ աֆղան գրող Խալեդ Հոսեյնին փոքր հասակում տեղափոխվում է Ամերիկա և որպես այդպիսին օտարվում իր հարազատ միջավայրից: Նա

նկարագրում է Աֆղանստանը հազարավոր կիլոմետրից, ներկայացնում աֆղանական ճակատագրերն այնպես կարծես ինքն ականատեսն է եղել բոլոր իրադարձությունների: Էմիգրանտական գրականության համատեքստում օտարումը սկսվում է հենց միջավայրից ու տեղափոխվում անձնական, ներքին ոլորտ: Հոսեյնին նկարագրում է իրենցից հեռացած, օտարացած հերոսների, որոնք շարունակում են ապրել կա՛մ իրենց միջավայրում, կա՛մ դրանից դուրս:

Հոսեյնիի ստեղծագործություններին մշտապես ուղեկցում են աֆղանական ընտանիքների բզկտված պատկերները: Հեղինակը լավ գիտի հերոսների կյանքի շերտերը թե՛ ներսից, թե՛ դրսից: Նա ընդհատ պատումներով մեզ տեղափոխում է պատերազմից քայքայված աֆղանական փոշոտ գյուղեր ու քաղաքներ և ցույց տալիս այն բոլոր գրկանքները, որոնց միջով հերոսները ստիպված են անցնել:

Էմիգրանտական գրականությունը շատ հաճախ սովորեցնում է ապրել՝ անկախ տեղից ու ժամանակից: Մեր հերոսները հեռանում են հայրենիքից, շարունակում ապրել, սակայն նրանցից շատերը չեն կարողանում վերգտնել կյանքի իմաստը: Հոսեյնին կարողանում է պատուհան բացել դեպի իր հերոսների հոգեկան աշխարհն ու թաքուն պահված կրքերը: Նա պատմության առանձին մասերից կարողանում է անբաժանելի ամբողջություն ստանալ ու դիպչել ընթերցողի սրտին: Նա կյանքի դաժանությունը ներկայացնում է թեթևությամբ, առանց ողբերգական երանգ հաղորդելու ու հերոսների հանդեպ խղճահարությամբ լցվելու:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ՈՒՈՒ ՎՏԱՐԱՆԴԻՆ ԱՄԵՐԻԿԱՅՈՒՄ. ԱՔՍՈՐԻ ՎԵՐՃԱՆՈՒՄԸ ԵՎ ՀԱՂԹԱՀՐՈՒՄԸ ՎԼԱԴԻՄԻՐ ՆԱԲՈԿՈՎԻ «ՊՆԻՆ» ԵՎ «ԳՈՒՆԱՏ ԿՐԱԿ» ՎԵՊԵՐՈՒՄ

Երրորդ գլխում շարադրված են Վլադիմիր Նաբոկովի գեղագիտական հայացքները, հեղինակի հայրենիքի հայեցակարգը, «Պնին» և «Լոլիտա» ստեղծագործությունները:

Ատենախոսության այս հատվածում ներկայացված են ռուս էմիգրանտ գրող Վլադիմիր Նաբոկովի ստեղծագործության գեղագիտական ընդունման «ռուսական» և «ամերիկյան» փուլերի մի քանի էական նրբություններ, ինչպես նաև գրողի դուալիստական կերպը:

Առաջինը ռուս Նաբոկովն է, ով իր գործերը ստորագրում էր «Սիրին» կեղծանվամբ, որպեսզի չխառնվի իր հոր՝ հայտնի հասարակական գործչի, «Ռուլ»

թերթի խմբագիրներից մեկի հետ: Երկրորդն ամերիկացի Նաբոկովն է, ով ամբողջ աշխարհում հայտնի դարձավ «Լոյիտա» վեպի շնորհիվ: Ռուս գրող Վլադիմիր Սիրինը և ամերիկացի Վլադիմիր Նաբոկովը հետազոտողների մեծամասնության համար ևս տարբեր գրողներ են: Իհարկե, նրանք համաձայն են, որ Սիրինը որոշակի ազդեցություն է ունեցել Նաբոկովի վրա, բայց այդ ազդեցությունը որոշիչ չի եղել: Նաբոկովի այս «պառակտված անհատականությունը» թույլ է տալիս ամերիկացի քննադատներին մինչ օրս գրել Նաբոկովի մասին: Գրաքննադատների համար Նաբոկովի ստեղծագործությունները շարունակում են մի տեսակ վայրի դաշտ լինել՝ լի առեղծվածներով և անակնկալներով:

Նաբոկովի ներսում երկու էություն կա թաքնված: Մեկում հիշողությունն է, իրականությունն ու մարդկայինը, մյուսում՝ օտարությունը: Ռուսաստանից հեռանալը գիտակցված որոշում էր: Նաբոկովին նվիրված լավագույն հոդվածներից մեկը Ադամովիչի «Մենություն և ազատություն» էսսեն է, որտեղ փորձ է արվում հասկանալ Նաբոկովի ընտրությունը: Անձի երկվությունը հատուկ է բոլոր էմիգրանտ գրողներին: Հիշողությունը հետապնդում է նրանց նույնիսկ օվկիանոսից այն կողմ: Երբ իրերին նայում ես օտարի աչքով շատ ավելին ես տեսնում: Տեսնում ես իրականությունը, որը շատերը չեն նկատում: Էմիգրանտական գրականության ֆենոմեններից մեկն այն է, որ ազգությամբ ռուս Նաբոկովը կարող է այնպես նկարագրել Բեռլինը, որ ոչ մի գերմանացի գրողի այդպես էլ չի հաջողվի դա անել:

20-30 ական թվականներին էմիգրանտության մեջ լինելով Նաբոկովը գրում էր ստեղծագործություններ, որոնք կապված են կորուսյալ դրախտի հետ: Նաբոկովը օտարություն բառի մեջ շատ ավելի խորը իմաստներ է դնում, քան բուն էմիգրանտության: Դրախտից օտարումը հոգեբանական տրավմա է: Օտարացումը անտղղելի ու անվերադարձ իրողություն է, ինչպես Լոյիտայի ծերությունը, վերափոխումը նիմֆետից գեղեցիկ կնոջ: Դրախտի կորուստը միանգամից տեղի չի ունենում: Դրախտից սկսում ես աստիճանաբար վտարվել, երբ օտար մարդիկ են հայտնվում կողքիդ: Մենք ամեն օր սպառում ենք մեր բաժին դրախտն ու այն սերը, որ կարող էինք ունենալ մնալով դրախտում: Նաբոկովի համար նոր աշխարհը սկսվեց հոր մահից և հայրենիքում հեղափոխությունից հետո, երբ հայտնվեց էմիգրանտության մեջ: Նա այդպես էլ չկարողացավ գտնել կորուսյալ դրախտն ու գոհացավ կյանքում թիթեռներ որսալով:

Տարբեր մենագրություններում ու հողվածներում Նաբոկովի մասին խոսվում է որպես ռուսական և ամերիկյան գրականության հանճարի:

Նաբոկովի ստեղծագործական ժառանգությունը, որը գրվել է ռուսերեն, իսկ 1940 թվականից՝ անգլերեն, շատ մեծ է: Այն իր մեջ ներառում է պոեզիա, դրամա, արձակ (վեպեր, ինքնակենսագրական գործեր), հողվածներ (այդ թվում թիթեռների հազվագյուտ նմուշների մասին), դասախոսություններ ռուսական գրականության և բանասիրության, ինչպես նաև շախմատի վերաբերյալ: Նաբոկովին հատուկ է ստեղծագործական բազմակողմանիությունը, էրուդիզմը, հերոսների հոգեբանության վարպետորեն ներկայացումը, բնության հրաշալի նկարագրությունները, ստեղծագործությունների ռացիոնալ և օրգանական կառուցվածքը:

Նաբոկովին հաջողվեց իր ստեղծագործություններում միավորել երկու մեծ գրական ավանդույթները: Նրա ճանապարհը դեպի ճանաչում և միջազգային փառք հեշտ չէր: «Էմիգրանտ ֆենոմենը» մի քանի տասնամյակ հայտնի չէր սեփական հայրենիքում, իսկ Ամերիկա տեղափոխվելուց միայն 15 տարի անց կարողացավ սկանդալային համբավ ձեռք բերել որպես «պոռնոգրաֆիկ» «Լոլիտա» վեպի հեղինակ:

Այժմ դժվար է հավատալ, որ համաշխարհային գրականության անվիճելի դասականը ժամանակին մերժված կամ անհայտ է եղել: Նաբոկովի աշխատանքները ոգեշնչում են նկարիչներին և երաժիշտներին, դրանց հիման վրա նկարահանվում են ֆիլմեր ու պիեսներ: Նաբոկովը ներառված է համալսարանական և դպրոցական գրական գրեթե բոլոր ծրագրերում: Ռուսաստանում, ավելի ուշ Ամերիկայում և Արևմտյան Եվրոպայում գրականագետների մի ամբողջ կաստա է ձևավորվել՝ մասնագիտանալով Նաբոկովի ստեղծագործությունների ուսումնասիրության մեջ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հիմնվելով սույն հետազոտության արդյունքների վրա՝ կարող ենք կատարել հետևյալ եզրահանգումները.

- Էմիգրանտական գրականության մասին խոսելիս անպայման պետք է անդրադառնալ ինքնության թեմային:

- Չնայած մեր արմատները փորձում են մեզ պահել հայրենիքում, շատ դեպքերում էմիգրանտ դառնալն անխուսափելի է դառնում (հարկադիր միգրացիա):

- Միգրացիան, ըստ էության, հասարակական նորմ է դառնում և ինքնության, պատկանելության և տան հասկացությունները վերանայելու և այլ դիտանկյան տակ ներկայացնելու անհրաժեշտություն է առաջանում:

- Լինելով սեփական համայնքի, ազգի, հասարակության մի մասը, էմիգրանտներն ապրում են բոլորովին այլ կյանքով, սակայն դառնալով գաղթական՝ նրանք կտրվում են պատմությունից և տեղանքի զգացումից: Նրանց շատ հաճախ չի հաջողվում պատկերել հայրենաբաղձությունը, անոմիան, աքսորը, արմատազրկությունը, անհանգստությունը: Վերոնշյալից ելնելով եզրահանգում ենք, որ աքսորի գրականությունն անհատական է, սուբյեկտիվ և բազմազան:

- Մանրակրկիտ ուսումնասիրելով էմիգրանտականության թեման, հանգում ենք այն եզրակացության, որ գաղթը կարող է փոխել մարդկանց և մտածողություն: Փոփոխություններն ակնհայտ են ամենուր՝ մշակույթում, հագուստի, երաժշտության և պոեզիայի նոր ոճերի, գրականության մեջ:

- Արդարացնելով էմիգրանտի բոլոր հնարավոր էկզիստենցիալ ընտրությունները, եզրահանգում ենք, որ կան ընդամենը մի քանի տարբերակներ օտարության մեջ կյանքը շարունակելու համար. վերստեղծել նախկին կյանքի տարրերը, փորձել միացնել կամ ամբողջությամբ նմանեցնել, ստեղծել նոր ինքնություն, որը բնութագրվում է անկախության զգացումով ինչպես ծագման հասարակությունից, այնպես էլ նպատակակետի սոցիալական կառուցվածքից: Միաժամանակ ապրել ներսում և դրսում, մշտապես լինել փախուստի մեջ, մտածել վերադառնալու մասին, բայց միևնույն ժամանակ գիտակցել դրա անհնարինությունը:

- Ուսումնասիրելով այն բոլոր դրդապատճառները, որոնք ստիպում են անհատին դառնալ էմիգրանտ, կարող ենք եզրահանգել, որ էմիգրանտների մեծ մասը ստիպված է գաղթական դառնում: Երկու համաշխարհային պատերազմները, անհաշվելի քանակի տարածաշրջանային պատերազմները, ապագադրության գործընթացը մեծ դեր խաղացին 20-րդ դարում աշխարհը հատած գաղթականների, փախստականների և աքսորյալների կյանքում: Մարդիկ անցնում են սահմաններ, տեղականը դառնում է համաշխարհային և գալիս է քարտեզները վերափոխելու ժամանակը:

- Օր օրի աճում է երկու կամ ավելի երկրներին պատկանող հեղինակների թիվը: Էմիգրանտական գրականությունը միայն գաղթականների կողմից չի գրվում: Աքսորի գրականությունը վերաբերում է բոլոր գրական գործերին, որոնք գրվում են գաղթի տարիներին: Հեղինակներն ընտրում են իրենց նոր տան լեզուն, այլ ոչ թե մայրենին, այնպես, որ իրենց տեքստերում չերևա ազգային ինքնությունն ու ժառանգությունը (ոչ Նաբոկովի, ոչ էլ Խալեդ Հոսեյնիի ստեղծագործությունները մայրենի լեզվով չեն): Այսպիսով, մասնատումը, տեղահանումը և օտարումը լավագույնս բնութագրում են էմիգրանտական գրականությունը:

- Գաղթը հիմնականում վերաբերում է անհատի տեղահանմանը և հնարավոր օտարմանը ինչպես հին բարոյական նորմերից, այնպես էլ նոր ենթատեքստերից: Աքսորի գրականությունը գործ ունի վերադարձի կա՛մ իրականացված կա՛մ մտացածին տարբերակի հետ: Այստեղից կարող ենք եզրահանգել, որ վերադառնալ կարող է նշանակել ետ գնալ, բայց հավասարապես նաև նորից սկսել, որոնել: Վերադարձն ունի և՛ ժամանակային, և՛ հոգևոր հարթություն: Խալեդ Հոսեյնին փախստական դառնալուց հետո վերադառնում է Աֆղանստան, սակայն չի կարող լրացնել տարիների բացը և վերադառնալ այն նույն կետին, որից սկսել է էմիգրանտական ճանապարհորդությունը, այդ պատճառով չի մնում հայրենիքում, այլ կրկին վերադառնում է ԱՄՆ: Վերադարձն էլ է ընտրություն: Ի տարբերություն Հոսեյնիի, Վլադիմիր Նաբոկովն այդպես էլ չի վերադառնում հայրենիք: Սա նույնպես գիտակցված էկզիստենցիալ ընտրություն է:

- Եզրակացություններից մեկն էլ այն է, որ աքսորված գրողն անընդհատ պայքարում է, որպեսզի վերականգնի իր նշանակությունը, ազդեցիկ դերակատարումը, երբեմնի հեղինակությունը: Էմիգրանտի գլխավոր մտահոգություններից մեկն իր ժողովրդին օգտակար լինելն է:

- Հնի վերահաստատումը, որն էմիգրանտն ունենում է նոր վայրում, շատ դժվար է տրվում, եթե իհարկե տրվում է: Գաղթականը հարցնում է ինքն իրեն.

«Որտե՞ղ եմ ես»: Ամենադժվար բանը օտարների մեջ օտար լինելն է, միանալը այն խմբին, որը քոնը չէ և չի էլ կարող լինել:

- Տուն վերադարձողը միշտ ակնկալում է վերադառնալ մի միջավայր, որը միշտ ունեցել է: Երբ նա հույսը կորցնում է, սկսում է վերադառնալ իր անցյալին հիշողությունների միջոցով: Եվ պատճառը, որ նա սկսում է տառապել, հենց հիշողությունն է: Կա երկու լուծում. կա՛մ ջնջել հիշողությունը, կա՛մ էլ նրա հետ ապրել ամբողջ կյանքի ընթացքում:

- Տուն վերադարձողը երբեք չի կարող լինել այն նույն մարդը, ով լքել է հայրենիքը: Նա նույնը չէ ո՛չ իր համար, ո՛չ էլ մնացածի, ովքեր սպասում են իր վերադարձին: Յուրաքանչյուր տուն վերադարձող համտեսել է օտարության համը: Ցավոք, երբեմն հայրենիքը չի կարող տալ այն նույն հնարավորությունները, ինչ այն երկիրը, ուր գնում է էմիգրանտը, սակայն միշտ չէ, որ արդարանում են էմիգրանտի սպասելիքները:

- Նաբոկովի բազմաթիվ դերերը՝ որպես վիպասան, բանաստեղծ, թարգմանիչ, լեզվի ուսուցիչ և բնագետ, նրան արտասովոր պատկերացումներ են տվել այն մարդկանց փորձառությունների մասին, ովքեր առանց իրենց իսկ ընտրության դառնում են անցանկալի իրենց երկրներում: Ետադարձ հայացք գցելով Ռուսաստանում անցկացված մանկությանը՝ հեղինակը նկատել էր, թե ինչպես իր ընտանիքի՝ արևմտյան Եվրոպա կատարած ուղևորությունների ժամանակ նա «քնելուց առաջ պատկերացնում էր, թե ինչ կլիներ, եթե դառնար աքսորյալ, ով տենչում էր մի հեռավոր, տխուր և (ճիշտ էպիտետ) անշեջ Ռուսաստանը՝ էկզոտիկ հանգստավայրերի էվկալիպտի ներքո: Լենինն ու իր ոստիկանությունը լավ կազմակերպեցին այդ ֆանտազիայի իրականացումը»: Ֆանտազիան դառնում է մոճավանջ, որին նա ստիպված է դիմակայել որպես չափահաս: Նա այդ հեռավոր, չմարող Ռուսաստանին կարոտ աքսորյալն է, և ցանկացած երկրի, ուր նա կգնա, վիճակված է համեմատվել Ռուսաստանի հետ:

- Աքսորի թեման առկա է Նաբոկովի բազմաթիվ ստեղծագործություններում, որոնք ներկայացվում են գլխավոր հերոսների միջոցով: Նրանք ստիպված են եղել տեղափոխվել, հղկվել և հարմարվել տարբեր երկրներում: Երկու տոտալիտար ռեժիմներից փախչելուց հետո Նաբոկովը կարողացավ ադապտացվել արտասահմանում շատ ավելի մեծ հաջողությամբ, քան ներգաղթյալ գրողների մեծ մասը, ոչ առանց անզլերենի և արևմտյան գրական ավանդույթների գերազանց իմացության, իհարկե:

- Իր մշակութային արմատներից կտրված՝ Նաբոկոլն օգտագործում է լեզուն՝ տապալելու կարծրատիպերը և արտահայտելու հիասթափությունը: Նա հավասարեցնում է «հանելուկի թեմայի լուծումը», որն ստեղծվել է շախմատային խնդիրների հանդեպ իր կրքով, «աքսորի, ներքին կորստի թեմայի լուծմանը»: Ո՞րն է այդ լուծումը: Թերևս դա վտարանդու ինքնին ապրած փորձն է, որն առաջնորդվում է հույսերով և հիասթափված ձախողումներով, վիճարկված փոփոխություններով և ճակատագրի շրջադարձերով, որոնք բացահայտում են մարդու ներքին ուժը: Նաբոկոլը և՛ մարտահրավեր է նետում, և՛ համաձայն է Սահիի հետ, ով աքսորն անվանում է «մահ, բայց առանց մահվան վերջնական ողորմության»:

- Կարևոր եզրահանգումներից մեկն էլ այն է, որ «տուն» հասկացությունն անքակտելիորեն կապված է ինքնության հետ՝ լինի դա անձնական, մշակութային, էթնիկական կամ ազգային: Աշխարհին բնորոշ են տեղահանությունները, պատերազմները, միգրացիաները և սփյուռքերի ձևավորումը: Տունը հաճախ ասոցացվում է տեղանքի կամ պատկանելության զգացման հետ: Երբ գիտակցում ես, որ դատապարտված ես ոչնչացման, համաձայն ես թեկուզ ուրիշի հողի վրա վերահաստատվելուն: Ներգաղթյալը ելք է փնտրում, վերահաստատվում, հեռանում տառապանքներից, սպիներից, չարչարանքներից, վեր կանգնում պատկանելությունից, հավատում, որ լուսավոր ապագայում հնարավոր կլինի ստեղծել մշակույթ, որը ոչ միայն մեկ ազգինը կլինի, այլ կդառնա համամարդկային:

**ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴԻՌՈՒՅԹՆԵՐԸ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԵՆ
ՇԵՂԻՆԱԿԻ ՀԵՏԵՎՅԱԼ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐՈՒՄ**

1. Օտարման խնդիրը Խալեդ Հոսեյնիի «Եվ արձագանքեցին լեռները» վեպում - Երևանի Վ. Բոյուսովի անվան լեզվահասարակագիտական համալսարանի «Բանբեր» պարբերական, 2019 1(50), էջ 224-236:
2. Մեղքի ընկալումը Խալեդ Հոսեյնիի «Օդապարուկ թոցնողը» վեպում - Օտար լեզուները բարձրագույն դպրոցում գիտական հանդես, 2019 1 (26), էջ 235-244:
3. Մեղքի ընկալումը և ֆրոյդիստական «վարժանքները» Վ. Նաբոկովի «Լոլիտա» վեպում - Օտար լեզուները բարձրագույն դպրոցում գիտական հանդես, 2019 2 (27), էջ 152-162:
4. Վլադիմիր Նաբոկովի գեղագիտական ընկալումները. «Լոլիտա» վեպը - Գրականագիտական հանդես, 2020 (1), էջ 327-340:
5. Exiled Writer in Migrant Literature – Wisdom, 2021 1(17), էջ 231-237:
6. Կնոջ կերպարը Խալեդ Հոսեյնիի «Հազար ջքնաղ արևներ վեպում» - Օտար լեզուները բարձրագույն դպրոցում գիտական հանդես, 2021 1(30), էջ 185-195:
7. Ինքնության որոնումը էմիգրանտական գրականության տարածքում - Օտար լեզուները բարձրագույն դպրոցում գիտական հանդես, 2021 2(31), էջ 161-173:
8. Ինքնության և մշակութային ավանդույթի բախումը ամերիկյան էմիգրանտական գրականության մեջ - ԵՊՀ Բանբեր, 2022 1 (37), էջ 25-35:
9. Վտարանդի Նաբոկովը և նրա լսարանը – Օտար լեզուները բարձրագույն դպրոցում գիտական հանդես, 2022 1 (32), էջ 137-144:
10. Ինքնության պահպանման խնդիրը միգրացիայի դարաշրջանում – Գրականագիտական հանդես, 2022 ԻԴ 1, էջ 261-272:
11. Աքսորյալի ինքնության առանձնահատկությունները Վլադիմիր Նաբոկովի օրինակով – ԵՊՀ Բանբեր, 2022 3 (39), էջ 38-45:

Согомонян Амалия Арменовна

**АНГЛОЯЗЫЧНАЯ ЭМИГРАНТСКАЯ ЛИТЕРАТУРА ВТОРОЙ ПОЛОВИНЫ XX
ВЕКА (ВЛАДИМИР НАБОКОВ, ХАЛЕД ХОССЕЙНИ)**

Защита диссертации состоится 22 декабря 2022 года, в 14:30 на заседании 066 профессионального совета ВАК РА, действующего в ЕГУ. Адрес: Ереван, ул. Алека Манукяна 1, корпус №7, факультет европейских языков и коммуникации ЕГУ, аудитория 420.

Резюме

Диссертация посвящена англоязычной эмигрантской литературе второй половины XX века, в частности изучению творчества русского писателя Владимира Набокова и афганского писателя Халеда Хоссейни.

Диссертация состоит из введения, трех основных глав с подглавами, заключения и списка использованной литературы. Работа написана на 174 компьютерных страницах.

Во введении кратко излагается основной предмет исследования диссертации, обосновывается актуальность выбранной темы, формулируются цель и задачи работы, научная новизна, методологическая база, предыстория вопроса и литература, относящаяся к теме.

В первой главе (Характеристика эмигрантской литературы) представлены особенности эмигрантской литературы, концепции отчуждения и самоотчуждения, принижения «американской мечты» и поиска идентичности в эмигрантской литературе.

В эмигрантской литературе столкновение идентичности и культурной традиции становится велением времени и заставляет всех эмигрантов делать экзистенциальный выбор между сохранением собственной идентичности и ее отчуждением.

Прежде всего следует понимать, что писатели-эмигранты являются не только жертвами социальных процессов, но и голосом своей родины. Они являются частью общества, нации, среды. Однако, став мигрантами, они становятся оторванными от истории и чувства места. Им очень часто не удается изобразить патриотизм, аномию, изгнание, безродность, тревогу.

Во второй главе (Иновации Халеда Хоссейни в контексте эмигрантской литературы) представлены иновации Халеда Хоссейни в контексте литературы эмиграции. С помощью трех романов автора: «Бегущий за ветром», «И эхом летит по горам», «Тысяча сияющих солнц», делается попытка раскрыть восточные мотивы, проблему отчуждения, соотношение вины и ответственности.

В третьей главе описаны эстетические взгляды Владимира Набокова, концепция родины автора, произведения «Пнин» и «Лолита».

В этой части диссертации представлены несколько существенных нюансов «русского» и «американского» этапов эстетической рецепции творчества русского писателя-эмигранта Владимира Набокова, а также дуалистический путь писателя.

Набоков сумел соединить в своих произведениях две великие литературные традиции. Его путь к признанию и мировой известности был непростым. «Эмигрантский феномен» не был известен на родине несколько десятков лет, и только через 15 лет после переезда в Америку ему удалось снискать скандальную известность как автору «порнографического» романа «Лолита».

Сейчас трудно поверить, что бесспорный классик мировой литературы когда-то был отвергнут или неизвестен. Произведения Набокова вдохновляют художников и музыкантов, по ним снимают фильмы и спектакли. Набокова включают почти во все университетские и школьные литературные программы. В России, а затем в Америке и Западной Европе сложилась целая каста литературоведов, специализирующихся на изучении творчества Набокова.

В Выводах диссертации обобщается проведенное исследование и по пунктам выделяются его результаты и наблюдения. В конце диссертации представлен полный список использованных источников и литературы.

Sghomonyan Amalya Armen

**ENGLISH MGRANT LITERATURE OF THE SECOND HALF OF THE 20TH
CENTURY (VLADIMIR NABOKOV,**

KHALED HOSSEINI)

The defense of the thesis will take place on December 22, 2022, at 14:30 at the RA SCC's specialized council's session 066 at Yerevan State University (address: Yerevan, Aleq Manukyan st. 1, YSU, 7th building, Faculty of European Languages and Communication, room 422)

Summary

The dissertation is devoted to the English-language migrant literature of the second half of the 20th century, in particular to the study of the works of the Russian writer Vladimir Nabokov and the Afghan writer Khaled Hosseini.

The dissertation consists of an introduction, three main chapters with subchapters, a conclusion and a list of references. The work is written on 174 computer pages.

The introduction briefly outlines the main subject of the dissertation research, substantiates the relevance of the chosen topic, and formulates the purpose and objectives of the work, scientific novelty, methodological base, background and literature related to the topic.

The first chapter (Characteristics of Migrant Literature) presents the features of migrant literature, the concept of alienation and self-alienation, belittling the "American dream" and the search for identity in the field of migrant literature.

In migrant literature, the clash of identity and cultural tradition becomes the imperative of the times and forces all migrants to make an existential choice between preserving their own identity and alienating it.

First of all, it should be understood that migrant writers are not only victims of social processes but also the voice of their homeland. They are part of a community, a nation, a society. However, once they become migrants, they are cut off from history and a sense of place. They very often fail to portray patriotism, anomie, exile, rootlessness, anxiety.

The second chapter (Innovations of Khaled Hosseini in the Context of Migrant Literature) presents the innovations of Khaled Hosseini in the context of migrant literature. With the help of the author's three novels: *The Kite Runner*, *And the Mountains Echoed*, *A Thousand Splendid Suns*, an attempt is made to reveal the Eastern motives, the problem of alienation, the relationship of guilt and responsibility.

The third chapter (*Russian Émigré in America: Revival and Victory of Exile in Vladimir Nabokov's "Invitation of a Friend" and "Invitation of a Stranger"*) describes the aesthetic views of Vladimir Nabokov, the concept of the author's homeland, as well as the works "Invitation of a Friend" and "Invitation of a Stranger".

This part of the dissertation presents several essential nuances of the "Russian" and "American" stages of the aesthetic reception of the work of the Russian migrant writer Vladimir Nabokov, as well as the writer's dualistic path.

Nabokov managed to combine two great literary traditions in his works. His path to recognition and world fame was not easy. The "migrant phenomenon" was not known in his homeland for several decades, and only 15 years after moving to America, he managed to gain scandalous fame as the author of the "pornographic" novel "Lolita".

Now it is hard to believe that the undisputed classic of world literature was once rejected or unknown. Nabokov's works inspire artists and musicians, films and performances are made based on them. Nabokov is included in almost all university and school literary programs. In Russia, and then in America and Western Europe, a whole caste of literary critics has been developed, specializing in the study of Nabokov's work.

The Conclusions of the dissertation summarize the conducted research and single out its results and observations point by point. At the end of the dissertation, a complete list of sources and literature used is presented.

